ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 123-Ա/3 «14» 04 2025թ.

## «ԳԼՈԲԱԼ ՍՊՈՐՏ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/39» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված խոհանոցային կահույքի (15 մոդուլային դպրոցների) գնման գործընթացին 9-րդ չափաբաժնի համար հայտ ներկայացրած **«Գլոբալ Սպորտ»** ՍՊԸ-ի փաստաթղթերը՝ անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն տալուց հետո կրկին չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրի մաս կազմող Տեխնիկական-առաջադրանք-9-ը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի արդյունքում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն գնահատող հանձնաժողովը 31.03.2025թ որոշմամբ մերժել է վերջինիս հայտը, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Գլոբալ Սպորտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02847743, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Սևանի 116) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Recoverable Signature

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ